| 12. | Ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը                                 | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր  
 տնօրենի խորհրդական  
 Արմինա Դարբինյանը

16/3  
 ✓





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-988-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐ-  
ԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱ-  
ԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-954-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ  
ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ  
(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**


*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 4-ի N 3.8-1/87038-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 3-ի N ԱԱ/3-4/7923-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Ստեղծագործական տեխնոլոգիաների երիտասարդական կենտրոն» ծրագրի մասին» N Մ-954-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Սոլիդ մակերես» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00865263) 2011 թվականի հոկտեմբերի 11-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 10 աշխատասեղանի պատրաստում՝ 12650000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱԿ**



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-989-Ա**  
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N Մ-001-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-  
ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**

**(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 4-ի N 3.8-1/87034-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 3-ի N ԱԱ/3-4/7941-11 եզրակացությունները, որ ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Ազատության 26, ՀՎՀՀ՝ 00040233) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունվարի 21-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2011-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցվածքի պահպանում և հետազոտարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-001-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Մեդիսար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555635) 2011 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված՝ N 311011/80 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր պարագաների և նյութերի ձեռքբերում՝ 228675 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-990-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱ-  
ՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ  
ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 3.8-2/87259-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N ՀՔ/22/10386-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 8-ի N ԱԱ/3-6/8108-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղորայքի և բժշկական նշանակության ապրանքների (20 տեղ, 4829 կգ ընդհանուր քաշով, 275935.51 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7500 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծման և անհատույց բաշխման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-991-Ա  
քաղ. երևան


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 3.8-2/87266-11 և Հայաստանի Հանրապետության կառա-  
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 8-ի N ԱԱ/3-  
6/8086-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի  
ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479)  
ձեռք բերված ամրանները (119 տեղ, 531300 կգ ընդհանուր քաշով, 185500000 դրամ  
ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ) ներմուծ-  
վում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի  
համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործա-  
կան ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող  
«Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում»  
ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարա-  
րություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական  
եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Մ Ա Մ


11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-992-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ  
13-Ի N Մ-299-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N 3.8-2/87265-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 9-ի N ԱԱ/3-6/8124-11 եզրակացությունները, որոշում է.

1. Սահմանել, որ սիրիահայ բարերար Կաբրիել Ուհանեսի Ղենբերջիի միջոցով «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված դպրոցական լաբորատոր պարագաները (208 տեղ, 32880 կգ ընդհանուր քաշով, 107634.60 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 12399.69 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծման և անհատույց բաշխման» ծրագրի մասին» N Մ-299-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-993-Ա  
քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍ-  
ՏՈՍԻ 24-Ի N Մ-699-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-  
ՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(«Երևան» հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2011 թվականի նոյեմբերի 11-ի N 3.8-2/87300-11 և Հայաստանի Հանրապետության կառա-  
վարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 9-ի N ԱԱ/3-  
6/8134-11 եզրակացությունները, որոշում է.*

1. Սահմանել, որ «Երևան» հիմնադրամի կողմից ձեռք բերված՝ ստորև նշված բեռները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 24-ի «Երևան» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-699-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

- 1) էլեկտրական սարք (մեկ տեղ, 321 կգ ընդհանուր քաշով, 6600 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 200 եվրո, «ՄՃՓ» ՏՄ).
- 2) փողոցների տոնական լուսավորության սարքեր (74 տեղ, 1000 կգ ընդհանուր քաշով, 62132 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1066.22 եվրո, «ՄՃՓ» ՏՄ).
- 3) փողոցների դեկորատիվ լուսատուներ (282 տեղ, 7480 կգ ընդհանուր քաշով, 154600 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7035 եվրո, «ՄՃՓ» ՏՄ).

4) դեկորատիվ շատրվանային համակարգ (34 տեղ, 13034 կգ ընդհանուր քաշով, 1033463 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «ՄՃՓ» ՏՄ).

5) նատրիումային լամպեր (մեկ տեղ, 55.7 կգ ընդհանուր քաշով, 3600 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 275 եվրո, «ՄՃՓ» ՏՄ).

6) պրոյեկտորներ՝ իրենց պարագաներով (13 տեղ, 895.4 կգ ընդհանուր քաշով, 201732 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1540 եվրո, «ՄՃՓ» ՏՄ).

7) էլեկտրական վահանակներ (227 տեղ, 3263.7 կգ ընդհանուր քաշով, 89342 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՏՄ):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և Երևանի քաղաքապետին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-994-Ա  
քաղ. երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՀԻՎԱՆՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ  
ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ  
ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 9-ի N 3.8-2/87215-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N ՀՔ/22/10380-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 8-ի N ԱԱ/3-6/8106-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի առողջապահության և սոցիալական ծառայությունների դեպարտամենտի հիվանդությունների վերահսկման ու կանխարգելման կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով «Բարձր ախտաճին թոչնագրիպի համաճարակի հակազդեցության» ազգային ծրագրի շրջանակներում ստացված ախտորոշիչ թեստերի (մեկ տեղ, 0.9 կգ ընդհանուր քաշով, 10 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 280 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՍՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռը համապատասխան բուժհաստատություններին բաշխելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-995-Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 21-Ի N Մ-001-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱ-  
ՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ  
(Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-  
ման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարու-  
թյան 2011 թվականի նոյեմբերի 9-ի N 3.8-2/87218-11 և Հայաստանի Հանրապետության կառավարու-  
թյանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 8-ի N ԱԱ/3-6/8107-11  
եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է.**

1. Սահմանել, որ Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնա-  
դրամի կողմից ձեռք բերված լաբորատոր սարքավորումը (մեկ տեղ, 1.36 կգ ընդհանուր  
քաշով, 2459 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը  
կազմել են 94.20 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի  
Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնա-  
ժողովի 2011 թվականի հունվարի 21-ի «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների  
ազգային հիմնադրամի կողմից իրականացվող «2011-2012 թվականների ընթացքում  
Հայաստանի Հանրապետության գիտական ենթակառուցների պահպանում և հետագա  
զարգացման աջակցություն» ծրագրի մասին» N Մ-001-Ա որոշմամբ հաստատված ծրագրի  
շրջանակներում և անհատույց հանձնվելու է Հայաստանի Հանրապետության գիտություն-  
ների ազգային ակադեմիայի «Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախա-  
րարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն և  
Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների  
կոմիտե:

ՄԱՍԻՆ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Շ ՈՒ Մ**

**11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-996-Ա  
քաղ. երևան**

**ԱՄՆ-Ի ՄԻԱՑՅԱԼ ՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱՆԱՑ-  
ՎՈՂ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ» ԾՐԱԳՐԻ  
Մ Ա Ս Ի Ն**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 9-ի N 3.8-2/87161-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N ՀՔ/22/10360-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 7-ի N ԱԱ/3-6/8018-11 եզրակացությունները, որոշում է.


1. Բարեգործական որակել ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից (ԱՄՆ, Գլենդեյ, Փասիֆիք պողոտա, N 1101) իր հայաստանյան ներկայացուցչության միջոցով (ՀՀ, քաղ. երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053) իրականացվող՝ 482837.60 ԱՄՆ-ի դոլար ընդհանուր արժողությամբ «Մարդասիրական օգնություն Հայաստանին» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից՝ իր հայաստանյան ներկայացուցչության հասցեով ուղարկված բեռը (72 տեղ, 2165 կգ ընդհանուր քաշով, 475062.60 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 7275 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» ՏՍ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:


3. ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչությանը՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հան-

րապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի մարզպետներին:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ




«2» նոյեմբերի 2011

Մարդասիրական օգնություն Հայաստանին

Ծ Ր Ա Գ Ի Ր

|    |  |   |
|----|--|---|
| 1. | Ծրագրի նպատակը                               | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամի կողմից դոնորներից ստացված մարդասիրական օգնության հավաքագրում, առաքում Հայաստան, ստացում և համապատասխան ձևակերպումների իրականացում ու բաշխում շահառու կազմակերպություններին: Մարդասիրական օգնության նպատակներն ըստ կազմակերպությունների նկարագրված են կից ներկայացված շահառուների բաշխման ցանկում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը          | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններ   |
| 3. | Բարեգործը                                    | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամ (1101 Ն. Փասիֆիք պողոտա, Գլենդեյլ, Կալիֆոռնիա 91202)   |
| 4. | Ծրագիրը կատարողը                             | ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամը՝ հայաստանյան ներկայացուցչության միջոցով (Քաղ. Երևան, Ալեք Մանուկյան 9, սենյակ 204, ՀՎՀՀ՝ 01574053):   |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը         | Հայաստանի Հանրապետություն, սոցիալական, կրթության, առողջապահության ոլորտներ:   |
| 6. | Ծրագրի բյուջեն                               | 482,837.6 ԱՄՆ դոլար   |
| 7. | Բարեգործություն ստացողը                      | Մտացող կազմակերպությունների ցանկը ներկայացվում է կից հավելվածով:  |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը              | 2011 թվականի նոյեմբերի 2-ից մինչև դեկտեմբերի 31-ը:  |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, | Բեռների ստացում, մաքսային ձևակերպում և առաքում շահառու կազմակերպություններին 2 նոյեմբերի 2011 մինչև 15 դեկտեմբերի 2011  |



|     |  |  |
|-----|--|--|
|     | անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը  | 482,837.6 ԱՄՆ դոլար  |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գները  | Ներմուծվող ապրանքների ցանկը ներկայացվում է կից հավելվածով՝<br>2165 կիլոգրամ բեռ<br>475,062.60 ԱՄՆ դոլար<br>Տեղափոխում՝ 7,275.00 ԱՄՆ դոլար  |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը   | Աբովյանի մաքսային պահեստի ծախսեր՝ 500.00 ԱՄՆ դոլար,  |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում:  |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը                           | Պարբերաբար հաշվետվություններ են ներկայացվելու ԱՄՆ-ի Միացյալ հայկական հիմնադրամին և օրենքով սահմանված կարգով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |



ՀԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ  
ՍԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ԴՈՒՈՐ                                | ՆԿԱՐԱԳՐՈՒ ԹՅՈՒՆ             | ՍՏԱՑՈՂ   | Մտացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ   | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը:  | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս   | ԿՈՂ       | ԱՐԿՂ | ՊԱՆԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ \$  |
|--------------------------------------|-----------------------------|--|---|--|--|-----------|------|--------------|---------|--------|-----------|
| Հովարդ Կարաբեջյան անվան կորպորացիա   | Բժշկական ամազիթ             | Բժիշկ տեր Պետրոսյան Կամո - HKCC                      |   | Բժշկական մասնագիտական ժուռնալները նախատեսված են «Հովարդ Կարաբեջյան» ԲԲԿ «Նորթ» կենտրոնի և «Նորթ Մարաշ» բժշկական կենտրոնի գրադարանների համար, այնտեղ աշխատող բժիշկների որակավորման բարձրացման նպատակով՝ անվճար ընթերցանության և պատճենահանման տրամադրումով: | Բժշկական մասնագիտական ժուռնալները նախատեսված են «Հովարդ Կարաբեջյան» ԲԲԿ «Նորթ» կենտրոնի և «Նորթ Մարաշ» բժշկական կենտրոնի գրադարանների համար, այնտեղ աշխատող բժիշկների որակավորման բարձրացման նպատակով՝ անվճար ընթերցանության և պատճենահանման տրամադրումով: | SC 204-11 | 1    |              | 16      | 7      | 50.00     |
| Հովարդ Կարաբեջյան անվան կորպորացիա   | Ռեհտգեղյան սարքի պահեստամաս | Բժիշկ տեր Պետրոսյան Կամո - HKCC                      | «Հովարդ Կարաբեջյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն, իրավաբանական հասցեն՝ ք. Երևան 0047, Լորդի Այգիներ 180, ԳՎՀԳ-01533153: | Բարեգործական նպատակ (ՀՀ ԿԾԳՀ 18.02.2011թ. N Ս-097-Ս որոշում «Հովարդ Կարաբեջյան» ԲԲԿ կողմից 2011թ. ընթացքում իրականացվող «Երեխաների անվճար բժշկական օգնություն» բարեգործական ծրագրի մասին):   | Ստանալիք ապրանքներից ռեհտգեղ սարքավորման պահեստամասերը նախատեսված են «Հովարդ Կարաբեջյան» ԲԲԿ Վանաձորի մասնաճյուղ դարձանատան համար, ուր հաշվառված են մինչև 14 տարեկան 16 248 երեխաներ, որոնք ստանում են անվճար ատամնաբուժական հետազոտություն և բուժում:     | SC 204-14 | 1    |              | 2       | 1      | 87.45     |
| Մալայան, ղոկտոր Մամուել (Կալիֆորնիա) | Բժշկական պարագաներ          | Դոկտոր Արաքսյան Ս. Մանկական Էնդոկրինոլոգիայի Կլինիկա | Բժշկական համալսարան /ԵՊՀ/ <<Մուրացան>> հիվանդանոցային համալիր Իրավաբանական հասցե՝ Կոդուկի 2, Երևան 025, Գտնվելու վայր- Մուրացան               | Բեռները նախատեսված են Էնդոկրին հիվանդություններով տառապող ստացիոնար կարգով բուժվող և դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաների բուժման համար  | Բեռի ստացման հիմնական շահառուն <<Մուրացան>> հիվանդանոցային համալիրի կլինիկաներն են: Դրանք նախատեսված են երեխաներին անվճար բուժօգնություն տրամադրելու համար:  | SC 204-06 | 8    |              | 344     | 156    | 14,876.00 |
| Օրթոմանկաբուժություն                 | Բժշկական սարքեր             | Կոլոյան Կարեն-Երեխաների վերածնունդ                   |   | Բժշկական սարքավորումներ և նյութեր, որոնք օգտագործվում են հիմնականում, Արաբկիր բժշկական կենտրոնում  | Արաբկիր բժշկական կենտրոն երեխաների անվճար բուժման նպատակով   | SC 204-12 | 1    |              | 90      | 41     | 4,000.00  |
| Մուսան, ղոկտոր Միշել                 | Բժշկական սարքեր և պարագաներ | Կոլոյան Կարեն-Երեխաների վերածնունդ                   | Երեխաների վերածնունդ Վ.Վաղարշյան 24/3, բլ. 3, ՀՎՀՀ 00069638   |  |  | SC 204-13 | 4    |              | 70      | 32     | 3,000.00  |



Handwritten signature and date: 16/11/19

ՀԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ  
ՍԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

| ԴՈՒՈՐ                  | ՆԿԱՐԱԳՐՈՒ ԹՅՈՒՆ                 | ՍՏԱՑՈՂ                                     | Մտացողների լրիվ անվանումը, գտնվելու վայրը, իրավաբանական հասցեն և ՀՎՀՀ   | Բեռների հատկացման նպատակը և դրա հետագա օգտագործման կարգը:  | Բեռի ստացման իրական շահառուն և ինչ նպատակով է նախատեսվում այն տրամադրել վերջինիս   | ԿՈՂ       | ԱՐԿՂ | ՊԱՆԵՏ/ SKIDS | ՔԱՇ LBS | ՔԱՇ կգ | ԱՐԺԵՔ \$ |            |
|------------------------|---------------------------------|--|---|--|--|-----------|------|--------------|---------|--------|----------|------------|
| Պարկինս կույրերի դպրոց | Ուսումնական նյութեր և պարագաներ | Ավագյան Ռուզաննա - Գյումրիի երեխաների տուն | ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ, ՀՀ 3103, ք. Գյումրի Թամարյան 17, ՀՎՀՀ-055219182 | Նախատեսված է բազմակի արատներով տեսողական խնդիրներով խոլ երեխաների հետազոտման և աշխատանքներ կատարելու համար | Գյումրու «Երեխաների տուն» նախատեսված է 1օրեկանից 6 տարեկան ՀՀ տարբեր մարզերից ընդունված բազմակի արատներով երեխաների համար: Երեխաներ տան՝ երեխաների մտավոր և ֆիզիկական զարգացման համար: | SC 204-15 | 63   | 1            | 184     | 83     | 5,011.76 |            |
|                        |                                 |  |   |  |  |           |      |              | 9       | 4,774  | 2,165    | 475,062.60 |

Handwritten signature and date: 16/11/19



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2011 թվականի N Մ- 997-Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի N Մ-806-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՈՒՐԲ ԿԱՄԻԼԼՈ» ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ  
ՀԻՄՆԱԴՐԱՄ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 8-ի N 3/3.8-1/87118-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 8-ի N ԱԱ/3-4/8089 -11 ու եզրակացությունները, **ո Ր Ո - 2 ու մ է.**


1. Սահմանել, որ «Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 20-ի «Կամիլլանների միաբանության «Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-806-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Հայրուսգազարդ» ԲԲԸ-ի Շիրակի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2011 թվականի հոկտեմբերի 31-ին կնքված N Ա035101110024 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բնական գազի մատակարարում՝ 2011 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը՝ 13000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


11 նոյեմբերի 2011 թվականի N Մ- **998** -Ա  
քաղ. երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-014-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՀԱՅ ԴՊՐՈՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Հայ դպրոց» հիմնադրամի 2011 թվականի նոյեմբերի 8-ի գրությունը, որոշում է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Հայ դպրոց» հիմնադրամի կողմից 2009-2010 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-014-Ա որոշման (2010 թվականի նոյեմբերի 19-ի N Մ-822-Ա որոշման խմբագրությամբ) անվանման մեջ, 1-ին կետում և որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ կետում «2009-2010 թվականներին» բառերը փոխարինել «2009-2013 թվականներին» բառերով :

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
11 նոյեմբերի 2011 թվականի N Մ - 999-Ա  
բաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-401-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 8-ի N 3/3.8-1/87119-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 8-ի N ԱԱ/3-4/8105 -11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ** է:


1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած պատանիների ու երիտասարդների երկարաժամկետ խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-401-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02704414) 2011 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երիտասարդական տան համար կենցաղային տեխնիկայի ձեռքբերում՝ 508000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:


2) «Արդատեկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01558445) 2011 թվականի հոկտեմբերի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է երիտասարդական տան սանի համար կարի մեքենայի ձեռքբերում՝ 240000 դրամի չափով, առանց ավելացված

արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-1000  
քաղ. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-  
ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ  
ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԱՐԱՔԿԻՐ» ՄԻԱՅՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 9-ի N 3/3.8-1/87152-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի նոյեմբերի 9-ի N ՀԲ/22/10323-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 7-ի N ԱԱ/3-4/7998-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.**

1. Սահմանել, որ «Արաքլիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաքլիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն.

«Բանաձև» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00449399) 2011 թվականի նոյեմբերի 1-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նշված ծառայությունների մատուցում՝ 2000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱԿ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-1001-Ա  
քաղ. Երևան

**«ԱՐԱՔԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ  
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 11-ի N 3/3.8-2/87268-11, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի N ՀՔ/22/10375-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 8-ի N ԱԱ/3-6/8102-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

1. Բարեգործական որակել Բելգիայի ՆԱՖ ասոցիացիայի կողմից «Արաքկիր» բժշկական համալիրի հասցեով ստացված վիրաբուժական գործիքների (1 տեղ, 1 կգ ընդհանուր քաշով, 3000 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 45 եվրո, ՄՓԵԼՍԱՓԱՄ մաքսատուն) ներմուծման ծրագիրը:

2 «Արաքկիր» բժշկական համալիրին՝ նշված բեռի ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2011 թվականի N Մ-1002  
քաղ. երևան


**«ԱՐԱՔԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 9-ի N 3/3.8-2/87154-11, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2011 թվականի նոյեմբերի 9-ի N ՖԲ/ԱնՄ-4/8902-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 7-ի N ԱԱ/3-6/8000-11 եզրակացությունները, **ո թ ո շ ու մ է.**

1. Բարեգործական որակելի Լեհաստանի «Վիլա Նովա Դիեսիում» հիմնադրամի կողմից «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված անկողնային սպիտակեղենի, խաղալիքների, մանկական հագուստի, ատամի մածուկի և խոզանակների (4 տեղ, 158 կգ ընդհանուր քաշով, 1524 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 685.48 եվրո, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծումը և բարերարի ցանկությամբ՝ «Մարի Իզմիրյան» ու «Նորք» մանկատներին անհատույց հանձնումը:

2 «Արաքկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի քննարկմանը ներկայացնել ներմուծվող բեռի բաշխման ցանկը:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 նոյեմբերի 2011 թվականի N Մ - 1003 - Ա

(Որոշումն ընդունվել է 2011 թվականի նոյեմբերի 11-ի նիստին)

քաղ. երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30-Ի N Մ-840-Ա ՈՐՈՇՄԱՆ ՈՒ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԿԱՄՐՋԱԿ» ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 15-ի N 3/3.8-1/87432-11 և Հայաստանի անրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 14-ի N ԱԱ/3-4/8280 -11 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 30-ի «Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ի ուսումնական շենքի ջեռուցում» ծրագրի մասին» N Մ-840-Ա որոշման մեջ և որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման 1-ին, ծրագրի 6-րդ և 10-րդ կետերում «14707230 դրամ» բառերը փոխարինել «17312360 դրամ» բառերով.


2) ծրագրի 9-րդ և 10-րդ կետերը լրացնել «Պատեքս-Գազ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված պայմանագրի թիվ 1 հավելվածի ցանկի համաձայն ապրանքների ձեռքբերում և մոնտաժում՝ 2605130 դրամի չափով, առանց ԱԱՀ-ի» բառերով:

2. Սահմանել, որ «Կամրջակ» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պատքս-Գազ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03527967) 2011 թվականի նոյեմբերի 9-ին կնքված՝ N ՊԳ 15/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ապրանքների ձեռքբերում և մոնտաժում՝ 2605130 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 նոյեմբերի 2011 թվականի N Մ - 1004-Ա  
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ  
ՌԻՋԱՆ ԳՅՈՒՂԻ ԶՈՐԱՎԱՐ ԱՆՊՐԱՆԻԿԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ  
ԴՊՐՈՑԻ ՀԱՍՅԵՈՎ ՍՏԱՅՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ  
ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 9-ի N 3.8-2/87164-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի հոկտեմբերի 28-ի N ԱԱ/3-6/7712-11 եզրակացությունները, **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**.

1. Բարեգործական որակելի հոլանդական Global Aid Network բարեգործական (ոչ-առևտրային) կազմակերպության միջոցներով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցի հասցեով ուղարկված բեռի (ցանկը կցվում է, 575 տեղ, 6500 կգ ընդհանուր քաշով, 23050 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3500 եվրո, «Արարատյան» Տ/Մ) ներմուծման ծրագիրը, որը նախատեսված է և ամբողջովին անհատույց հանձնվելու է դպրոցին, բացի 7 հաշմանդամային անվասայլակներից, որինցից 5-ը հանձնվելու են Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանին, 1-ը՝ «Աշտարակի բժշկական կենտրոն»-ին և 1-ը՝ «Ուջանի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ին:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ուջան գյուղի Զորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել դրանց օգտագործման մասին ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետին:

ՆԱԽԱԳԱԿ

Ա.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ԲԵՌԻ ՑԱՆԿ** /Սույն բեռները ամբողջովին նախատեսված են և անհատույց հանձնվելու են Ուջանի գորավար Անդրանիկի անվան միջնակարգ դպրոցին/

|                                 |                             |
|---------------------------------|-----------------------------|
| դպրոցական դասասեղան             | 223 տեղ, 2450 կգ, 4460 եվրո |
| դպրոցական աթոռ                  | 252 տեղ, 1620 կգ, 5040 եվրո |
| համակարգիչ+մոնիտոր              | 30 տեղ, 400 կգ, 8250 եվրո   |
| գրասեղան                        | 2 տեղ, 100 կգ, 240 եվրո     |
| գրատախտակ                       | 19 տեղ, 950 կգ, 2660 եվրո   |
| ուսուցչի աթոռ                   | 5 տեղ, 150 կգ, 250 եվրո     |
| սեղան դասարաններում օգտագործվող | 10 տեղ, 200 կգ, 400 եվրո    |
| հագուստ օգտագործված             | 17 տեղ, 170 կգ, 510 եվրո    |
| դպրոցական պայուսակ              | 10 տեղ, 110 կգ, 400 եվրո    |

|                          |                         |
|--------------------------|-------------------------|
| անվասայլակ հաշմանդամային | 7 տեղ, 350 կգ, 840 եվրո |
|--------------------------|-------------------------|

- 1-ը՝ «Աշտարակի բժշկական կենտրոն»-ին
- 1-ը՝ «Ուջանի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ին
- 5-ը՝ ՀՀ Արագածոտնի մարզպետարանին





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 նոյեմբերի 2011 թվականի N Մ-1005-Ա  
քաղ. Երևան

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱԽՄԱՏԻ ԱԿԱԴԵՄԻԱ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ  
ՍՏԱԶՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով որոշման նախագծի 2011 թվականի նոյեմբերի 15-ի համաձայնեցման թերթը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2011 թվականի նոյեմբերի 14-ի N 3.8-2/87369-11, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության 2011 թվականի նոյեմբերի 14-ի N 1/06/1003-11 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2011 թվականի նոյեմբերի 9-ի N ԱԱ/3-6/8119-11 եզրակացությունները, որոշում է.

1. Բարեգործական որակել անհատ բարերար Գալուստ Գալստյանի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Չայկովսկու փողոց 34, բնակարան 11, անձնագիր՝ AK0660195) որպես օժանդակություն «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամի համար ձեռք բերված «Honda CRV» մակնիշի ավտոմեքենայի (2008 թվականի արտադրության, նույնականացման համար՝ JHLRE48318C403285, 15500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 1900 ԱՄՆ-ի դոլար) ներմուծման ծրագիրը:

2. «Հայաստանի շախմատի ակադեմիա» հիմնադրամին՝ նշված ավտոմեքենայի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ